ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՄԵԾԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 29-Ա որոշմամբ

ՄԵԾԱՎԱՆ 2017թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 4
2.2. Համայնքիսոցիալ տնտեսական իրավիճակը 5
2.3. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 6
2.4. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 6
2.5. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 8
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 9
3.1. Համայնքիզարգացմանտեսլական 9
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 9
4. ՀԶԾ ֆինանսավորում 13
5. ՀԶԾ մոնիթորինգ 13

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ իմ աշխատած տարիները գյուղի պետական տնտեսությունում/совхоз/, իսկ 1993թվականից մինչ օրս լինելով գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ, ապա՝ 1997թվականից որպես գյուղապետ, ինձ թույլ են տալիս, որ ես քաջատեղյակ լինեմ մեր գյուղի ամեն մի անցուդարձին՝ սկսած յուրաքանչյուր ընտանիքից մինչև անհատը: Մենք անչափ աշխատասեր, ազգանվեր և միմյանց սատարող ժողովուրդ ենք: Համայնքում ձեռնարկված յուրաքանչյուր ծրագրի՝ դուք ունեք ազնիվ մասնակցություն: Դա ինձ թույլ է տալիս համոզվելու, որ համայնքի զարգացման 2017-2021թ.թ ծրագիրը, որը ես ներկայացնում եմ ձեզ՝ հաջողությամբ կիրագործենք: Մեր համայնքը դեռևս խորհրդային տարիներին աչքի է ընկել գյուղատնտեսական և անասնապահական մթերքների արտադրությամբ: Շատ լավ հաջողությունների ենք հասել կարտոֆիլի, հացահատիկի արտադրության բնագավառում: Իսկ մսի և կաթի արտադրությամբ հանրապետությունում առաջնային դիրք ենք ունեցել: Այժմ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով բավականին հետընթաց ունենք: Բոլորիս էլ պարզ է, որ համայնքի զարգացման առաջիկա 5տարիներին ինչ ուղղությունների վրա ենք կենտրոնանում: Այժմ եթե այդ հարցը յուրաքանչյուրիդ տան՝ դուք համարյա հարյուր տոկոսով ճիշտ կնշեք այդ ուղղությունները, դրանք են՝ անասնապահությունը/ես կասեի՝ հիմնականում/ և գյուղատնտեսությունը: Պարզից էլ պարզ է, որ միայն մթերքների արտադրությամբ լուրջ հաջողությունների չենք կարող հասնել: Աշխարհի որևէ երկիր միայն հումքի վաճառքով չի կարող հզոր տնտեսություն ունենալ: Կարևորը հումքի վերամշակությունն է, իսկ կարևորից էլ կարևոր՝ իրացման շուկա ունենալը: Պետք է մեր ուշադրությունը կենտրոնացնենք այդ ուղղությամբ: Այդ գործոնն է, որ էապես բացասաբար կարող է անդրադառնալ համայնքի զարգացման իրավիճակի վրա:

Հաջորդ կարևոր գործոնը, որը նույնպես կարող է ազդել և ազդում է գյուղմթերքների արտադրության վրա՝ որակյալ, բերքատու սերմնացուի՝ ես կասեի ոչ թե պակասն է, այլ բացակայությունը: Էլիտար սերմնացու տալիս են առանձին տնտեսույթունների, որոնք այդ ոլորտում արդոն բավականին փորձ ունեն, իսկ նրանցից սերմնացու ձեռք բերելը արդեն թանկ հաճույք է: Դրանով հանդերձ,կաշխատենք այդ ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկել և կարծում եմ՝ կհասնենք նկատելի հաջողությունների: Մեր բնական պայմանները թույլ են տալիս մանավանդ անասնապահության ոլորտում զգալի հաջողությունների հասնել:

Որևէ լուրջ գործ համայնքում սկսելու համար առաջին հերթին պետք է բազա ունենալ, այսինքն՝ ֆինանսներ: Մեծ աշխատանքների կատարման համար համայնքի բյուջեն թույլ չի տալիս, այլ պարագայում խոշոր ներդրողներ են անհրաժեշտ: Հարկավոր են լայն կապեր միջազգային կազմակերպությունների և ներդրողների հետ, որը բավականին լուրջ և դժվար գործ է: Ունենք կվարցի և կարմիր տուֆի հանքեր, որը փորձել են մի քանի անգամ շահագործել, բայց դժվարությունների պատճառով ընդհատել են աշխատանքները: Սրանք են մեր համայնքի զարգացման ուղղությամբ տարվելիք աշխատանքների ոլորտները:

Դրա հետ մեկտեղ՝ չի կարելի աչքատող անել գյուղի զարգացման, շենացման, ծառայությունների ավելացման, կամ եղածի որակի բարձրացման ուղղությունները: Մենք ծրագրում ընդգրկել ենք համայնքի լուսավորվող փողոցների շարունակական լինելը, հրապարակի նախագծային, իսկ այնուհետ՝ իրականացվող աշխատանքները, աղբահանության համար անհրաժեշտ տեխնիկայի ձեռք բերումը ու այլ նման հարցեր:

Հուսով եմ, որ առաջիկա հինգ տարիներին կաշխատենք և համատեղ ուժերով կհասնենք մեր նպատակների իրականացմանը, ինչը դրականորեն կանդրադառնա մեր կենցաղի, ապրելակերպի և առողջության վրա:

Ծրագիրը ընդունելուց հետո, նշված ժամկետներում կսկսենք մեր աշխատանքները:

Բոլորիս հաջողություն եմ մաղթում :

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Մեծավան համայնքը գտնվում է Լոռվա սարահարթի հյուսիսային մասում՝ սահմանակից լինելով Վրաստանի Հանրապետությանը: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1550-1700մ բարձրության վրա: Բնակլիմայական պայմանները՝ բարեխառն են: Ամառը առանձնանում է իր զով և տեղումնառատ եղանակով, գարունը կարող է բավականիին ուշանալ, երկարատև անձրևները կարող են գարնանացանի ուշացման կամ աշնանացանի վնասման պատճառ դառնալ: Ձմեռը մեղմ է, կարող է նույնիսկ կայուն ձյունածածկ չստեղծվել: Տեղումների տեղաբաշխումը ըստ տարիների՝ խիստ անհամաչափ է: Այդ պատճառով գյուղատնտեսությունը համայնքում ինչ որ տեղ կարող է վիճակախաղի նմանվել:Համայնքի հողերը կպչուն սևահողեր են, իսկ բուսածածկը՝ ալպյան է, որն իր դրական դերն ունի անասնապահության բնագավառում:

Մեծավանն ունի երկու միջնակարգ դպրոց, արվեստի դպրոց, նախակրթարան, մշակույթի կենտրոն, առոջության կենտրոն և գրադարան:

Գյուղը եղել է բնակատեղի, ունեցել է երկու եկեղեցի, որոնց առկայությունն է եղել պատճառը, որ այն մինչև 1822թվականը կոչվել է Խոշաքիլիսա, որից հետո անվանակոչվել է Շահնազար: Կոնկրետ հավաստի տվյալներ չկան թե ինչու Շահնազար, բայց պատճառը կարող է լինել այն, որ այդ գյուղատեղին և շրջակայքը մի ժամանակ պատկանելիս է եղել Ղարաբաղի մելիքներց մեկին՝ Մելիք Ջումշուցին: 1978թվականի Հայական ԽՍՀ Գերագույն Խորհրդի հրամանագրով Շահնազարը անվանավել է Մեծավան:

Գյուղի մերձակա տարածքում կան կիկլոպյան ամրոցի հետքեր, ուխտատեղի/Խաչքար կամ Թևավոր խաչ/ մատուռ/Խարաբի վանք/ և այլն:

Գյուղը տվել է բազմաթիվ գիտնականներ, գրականության և արվեստի գործիչներ, որոնց շարքում իր արժանի տեղն է զբաղեցնում հայ ականավոր և կարկառուն դեմքերից մեկը՝ ակադեմիկոս, լեզվաբան Գևորգ Ջահուկյանը:

20-րդ դարի 60-70-ական թվականներին համայնքում գրանցվել է 300-ից ավելի ծնունդ, իսկ համայնքի բնակչության թիվը անցել է յոթ հազարից:

Այժմ համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 5748,

այդթվում՝

0-1տարեկան – 72

5- 6տարեկան-152

7-10 տարեկան-191

11-14 տարեկան – 211

18-22 տարեկան-246

23-45 տարեկան-1993

46-62 տարեկան– 1839

63 և ավելի -892

2.2. Համայնքիսոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 150 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 20 մլն դրամ:
- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	126հա	10048տ
բանջարեղեն	4.43հա	682g
հացահատիկ	365հա	9635g

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	1396
Այդ թվում կովեր	885
Մանր եղջերավոր անասուններ	1207
Այդ թվում մայրեր	789
խոզեր	107
Այդ թվում մայրեր	25
թռչուններ	4008
Այդ թվում հավեր	3305
մեղվաընտանիքներ	144

- Համայնքում գործում է երկու միջնակարգ դպրոցներ:
- Համայնքում գործում է նախակրթարան, ուր հաճախում են 45երեխա:

Նախակրթարանն ունի 8 աշխատող:

- Համայնքում գործում է «Առողջության կենտրոն» ՊՓԲԸ:

Աշխատում են 13 աշխատողներ:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 331 ընտանիքներ,
  - Մեծավան համայնքում կան պատմամշակութային արժեք ներկայացնող հուշակոթողներ՝
  - Սուրբ Գևորգի եկեղեցի,
  - Սուրբ Հովհաննեսի եկեղեցի,
  - Կիկլոպյան ամրոցի հետքեր
  - Միջնադարյան գերեզմաններ

2.3. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
1.	Պահուստային ֆոնդ	16600.0	12000.0	12000.0	12000.0	12000.0
2.	Գույքահարկ	8500.0	8500.0	8500.0	8500.0	8500.4
3.	Հողի հարկ	8200.0	8200.0	8200.0	8200.0	8200.0
4.	Ոչ գյուղ. նշան. հողի հարկ	50.0	50.0	50.0	50.0	50.0
5.	Այլ ոչ հարկային եկամուտներ					
6.	Հողի վարձավճար	1300.0	1300.0	1300.0	1300.0	1300.0
7.	Դոտացիա	95352.4	95352.4	95352.4	95352.4	95352.4
8.	Տեղական տուրք	432.0	432.0	432.0	432.0	432.0
9.	Հողի օտարումից					
10.	Ծնողական մուտքեր	1100.0	1100.0	1100.0	1100.0	1100.0
11.	Այլ աղբյ. ստա. սուբսիդացիա					
12.	Շինարարական թույլտվություն	110.0	110.0	110.0	110.0	110.0

2.4. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Մեծավան համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 40%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում::Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարարմիջավայրի բարելավմանը ևձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,

.բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,

. ֆինանսի բացակայությունը

.Համայնքի գույքի կառավարմա նխոչընդոտներն են՝

.Ֆինանսական սղությունը,

2) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոնն է՝

.մշակութային կյանքի պասիվությունը,.

3) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

.գործազրկությունը,

..խմելու ջրի անհավասարաչափ բաշխումը,

4) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

.սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

5) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններ նեն՝ .համայնքաբնակների աղքատությունը,

6) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը,

ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

.ջրմուղ-կոյուղու բացակայությունը,

.խմելուջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,

.միջոցների սղությունը,

7) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

.միջհամայնքային, ներհամայնքային և դաշտահիջյան ճանապարհների քայքայված վիճակը,

8) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,

.սեյսմիկ գոտում գտնվելը,

.աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,

.համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

9) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններնեն՝

.հողաբաժնի սղությունը

.որակյալ(սերմի բացակայությունը,

.սպառման շուկայի դժվար հասանելիությունը,

.գլխավոր մայրուղուց հեռու լինելը:

10) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների սակավությունը,

.աղբահանման տեխնիկայի բացակայությունը,

11) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

12) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտողգ ործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

13) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

.բնակչության իրազեկվածության պակասը,

.բուժ-գործիքների պակասը,

.նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը,

.անվճար բուժ սպասարկման քիչ լինելը,

.ջեռուցման բացակայությունը

14) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

15) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝

..ինտերնետ կապի անորակությունը,

.տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,

16) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

գ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

2.5. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	*Համայնքի թույլ կողմեր*
.Բանիմաց աշխատուժի առկայություն .Միջնակարգ դպրոցների առկայություն. Բուժ-ամբուլատորիայի առկայություն .Բերրի հողերի առկայություն .Հեռահաղորդակցության առկայություն .Գազաֆիկացման առկայություն .Ողղակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն	.Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ .Հողաբաժնի քանակի քչություն .Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ .Ֆինանսական ռեսուրսների բացակայություն .Ծնելիության նվազում .Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ .Թերզբաղվածության բարձր մակարդակ .Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ .Աշխատատեղերի պակաս
Հնարավորություններ	*Սպառնալիքներ*
.Խմելու ջրի պաշարի առկայություն .Պետական և միջազգային ծրագրերի մեջ	.Տարերային աղետների վտանգ .Գյուղատնտեսական մթերքների արտահանման

ընդգրկվածություն	դժվարություն
.Բերրի հողերի առկայություն .Քարի հանքի առկայություն .Քվարցի հանքի առկայություն	.Սպառման շուկաների դժվար հասանելիություն .Խիստ կլիմա /ցրտահարություն/ .Արտագաղթ

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները,և խոչընդոտները հաղթահարելով ՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտայի նմիջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 3%-ով աճի:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
2) Համայնքի գույքը կառավարել:
3) նախադպրոցական կրթությանը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
7) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
8) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը,բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը:Կոմունալ տնտեսության

աշխատանքներնապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,

9) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել,համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
10) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
11) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
12) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
13) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
14) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
15) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունըխթանել:
16) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
17) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
18) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
19) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 1

Մեծավան համայնքում կոմունալ տնտեսության աշխատանքները կազմակերպելու նպատակով կիրականացվի «**Որակյալ խմելու ջրով ապահովում և ջրագծի ներքին ցանցի վերակառուցում**» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով ապահովումը:Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Վերանորոգված՝ խմելու ջրի գործող ներքին ցանց և կանոնակարգված ջրի բաշխում

2.Վերակառուցված ջրագծի ներքին ցանց

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել խողովակներ 10կմ-ի համար, էլեկտրոդ և փականով բաժանարարներ:

1.2.Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:

1.3.Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:

1.4.Երկրորդ ջրագծի խողովակաշարն անցկացնել՝ միացնելով գործող ջրագծի ներքին ցանցին:

1.5. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդկենտրոնի օգնությամբ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Մեծավան համայնքի բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.:Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Կատարել համայնքային ներդրումներ:

Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում, բնակչության 30%-ը ջուր չունեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով: Համայնքը չունի ջրմուղ-կոյուղի և շահառուներն օգտվում են դրսի սան-հանգույցներից: Ծրագրի իրականացմամբ համայնքի բոլոր շահառուները կօգտվեն ջրմուղ կոյուղուց: Համայնքում առկա զանազան հիվանդությունների վտանգը կվերանա, կոմունալ տնտեսությունը կզարգանա:

ԾՐԱԳԻՐ 2

Մեծավան համայնքում **«Բարձր բերքատվության կարտոֆիլի արտադրության կազմակերպում»:** Ծրագրի նպատակն է ՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության շահութաբերության բարձրացման համար կարտոֆիլի մեկ հա-ի բերքատվությունը հասցնել 180-200 ցենտներ:

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1. Գյուղատնտեսության նախարարության, մարզպետարանի և համայնքապետարանի համատեղ ջանքերով մինչև 2018թ. Ապրիլի 1-ը համայնք ներկրել 30տոննա բարձր բերքատվության կարտոֆիլի սերմնացու:

   1.1Մինչև 2017թվականի ապրիլի 1-ը ձեռք բերել 50տ հանքային պարարտանյութ և անհրաժեշտ քանակությամբ թունաքիմիկատ:

   1.2 Ծրագիրն սկսվում է 2017թվականին և ավարտվում 2018թվականին:

ԾՐԱԳԻՐ 3

Մեծավան համայնքում բնակչության կենցաղային պայմանների բարելավման նպատակով կիրականացվի փողոցային **«Փողոցային լուսավորության անցկացման շարունակական» ծրագիրը:** Ծրագրի նպատակն է ՝ բարելավել համայնքի բնակչության կենցաղային, կուլտուրական պայմանները:

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1. Համայնքի ավագանու հետ համատեղ նշել այն փողոցները կամ փողոցների հատվածները, որտեղ անցկացվելու է լուսավորություն:
2. Էլեկտրասյուների, լամպերի և օժանդակ էլեկտրասարքավորումների ձեռք բերում՝ 5կմ փողոցային լուսավորություն անցկացնելու համար:

   1.1Լիցենզավորված կազմակերպությանը դիմել նշված փողոցների լուսավորության անցկացման նախագծային-նախահաշվարկային աշխատանքները կատարելու համար:

3. Աշխատանքների կատարման համար օրենքով սահմանված կարգով անցկացնել մրցույթ:

Ծրագիրն սկսվում է 2017թվականին և ավարտվում 2021թվականին:

ԾՐԱԳԻՐ 4

Մեծավան համայնքում հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանման և շահագործման նպատակով կիրականացվի «**Ճանապարհների բարեկարգում**»ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով ապահովումը:Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1.Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.3. Կատարել ճանապարհների կահավորում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 50%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Մեծավան համայնքի բոլոր բնակիչները և հարևան համայնքների բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.:Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, մրցույթ հայտարարել ճանապարհաշինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Ստանալ համապատասխան գումարը, փոխանցել գումարն ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում, կահավորված չեն և բացակայում է փողոցային լուսավորությունը: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի:

ԾՐԱԳԻՐ 5

Մեծավան համայնքում կրթության, մշակույթի և սպորտի զարգացման նպատակով կիրականացվեն **«Մանկապարտեզի շենքի 3-րդ մասնաշենքի, մշակույթի տան վերանորոգման և մարզահրապարակի կառուցման աշխատանքների»** ծրագիրը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Ամբողջությամբ վերանորոգված մանկապարտեզի շենք և մշակույթի տուն:

2. Մարզահրապարակ՝ սպորտային տարբեր միջոցառումների և մրցումներ կազմակերպելու համար:

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Նշված օբյեկտների վերանորոգման և կառուցման համար կազմել համապատասխան նախագիծ՝ իրավասու կազմակերպության միջոցով:

1.2. Աշխատանքների կատարման համար անցկացնել մրցույթ:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Մշակույթի տան համար ձեռք բերել համապատասխան գույք/սեղան, աթոռ և այլն/:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, ֆինանսական միջոցներ: Ծրագրի հիմնական շահառուներն են Մեծավան համայնքի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2020թ.:Ծրագրի իրականացումից հետո համայնքի բնակչությանը կամասնակցի մարզական և մշակությանին ամենատարբեր միջոցառումների:

ԾՐԱԳԻՐ 6

«Մեծավանի հրապարակի վերակառուցման աշխատանքների իրականացման» ծրագիրը:
Ծրագրի միջանկյալ արդյունքը կլինի ներկա պահանջները բավարարող գեղեցիկ հրապարակ ունենալը
Ծրագրի հիմնական գործողություններն են՝
1.1Միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.
1.2. Հրապարակի վերակառուցման համար նախագծային-նախահաշվարկային աշխատանքների կատարումը օրենքով սահմանված կարգով:
1.3. Նշված աշխատանքների կատարումից հետո, սահմանված կարգով կազմակերպել աշխատանքների կատարման համար մրցույթ:
1.4. Հաղթող կազմակերպությանը թույլատրել անցնել աշխատաների կատարմանը սահմանված ժամանակահատվածում:
Ծրագիրը իրականացնել 2017-2019թվականների ընթացքում: Ֆիանանսավորումը համայնքի բյուջեից:

4. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

5. ՀԶԾ մոնիթորինգ

ՀՀԶԾ-ի մոնիթորինգը - իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը,բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը : Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: